

**ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ ԵՒ ՎԵՐԱՕԾՈՒՄ
ԹԻՖԼԻՍԻ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախաձեռնութեամբ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի վերահսկողութեամբ եւ բարերարութեամբ Տոբթ. Արամայիս Պարոնեանի եւ Տիկին Նաթելա Լալաբէկեան Պարոնեանի, անցնող երեք տարիներու ընթացքին հնարաւոր դարձաւ փրկել եւ գեղեցկօրէն վերանորոգել Թիֆլիսի Հավլաբար հայկական թաղամասին մէջ գնտուող 1805 թուականին կառուցուած Սուրբ Էջմիածին Եկեղեցին: Նախապէս այս եկեղեցին կոչուած է Սուրբ Գեորգ եւ վերանորոգուած է 1944ին, սակայն 1983 եւ 1990 թուականներուն դարձեալ վերանորոգուելով վերանուանուած է Սուրբ Էջմիածին:

Թէեւ այս տարուան Յունուար 6ին՝ Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տօնի առիթով եկեղեցին իր դռները բացած է հաւատացեալներուն առջեւ, սակայն վերաօծումը պիտի կատարուի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Վրաստան կատարելիք այցելութեան ժամանակ, որ կը նախատեսուի այս տարուան Հոկտեմբերի 22-28ի օրերուն: